

2020 թվականի մարտի 25

Հարգելի Լոս Անջելեսի քաղաքային քուեջի ընտանիք.

Ես ձեզ հետ կիսվելու մի շատ կարևոր տեղեկատվություն ունեմ LACC- ում COVID-19 երկու դեպքերի վերաբերյալ: Չորեքշաբթի օրը, մարտի 25-ին, մենք տեղեկություն ստացանք հնարավոր COVID-19-ի երկու առանձին միջադեպերի վերաբերյալ:

Առաջինի դեպքում ներգրավված է եղել LACC-ի գրադարանի աշխատակիցը, ով հիվանդության պատճառով դիմել է բժշկի և այսօր մեզ հայտնել, որ իրեն բուժող բժիշկը ասել է, որ ախտանիշները ցույց են տալիս, որ նա «հավանաբար» COVID-19 կորոնավիրուսակիր է: Աշխատակիցը, այնուամենայնիվ, բարձր ռիսկային խմբի մեջ չէ. Այդ իսկ պատճառով էլ նրան COVID-19-ի թեսթ չեն արել, բայց աշխատակիցը կարանտինի մեջ է՝ ախտանիշները դիտարկելու համար: Նա մեզ տեղեկացրել է, որ իրեն լավ է զգում: Նա վերջին անգամ եղել է քուեջում վեց օր առաջ հինգշաբթի օրը, 2020 թվականի մարտի 19-ին, , և մենք կապ ենք հաստատում յուրաքանչյուրի հետ, ով միգուցե այդ օրը այնտեղ է գտնվել:

Այսօր կեսօրին մեզ նաև տեղեկացրել են երկրորդ միջադեպի մասին, որը վերաբերում է LACC-ի երկու ուսանողների, որոնք ավելի քան երկու շաբաթ առաջ, 2020 թվականի մարտի 10-ին, իրենց կլինիկական փորձերի ժամանակ, հնարավոր է, որ ենթարկվել են COVID-19-ի Քայլեր հիվանդանոցի հիվանդներից մեկի սենյակում: Ուսանողները 2020 թվականի մարտի 10-ից ինքնամեկուսացման մեջ են, և նրանք մեզ տեղեկացրել են, որ լավ են զգում՝ առանց ախտանիշների: Նրանց հնարավոր ազդեցությունն արդեն գերազանցել է առողջապահության պատասխանատուների առաջարկած կարանտին: Նրանց հնարավոր վարակված լինելու շրջանը գերազանցում է առողջապահության հեղինակությունների կողմից սահմանված կարանտինի շրջանին:

Այս երկու դեպքերը չհաստատված դեպքեր են, բայց մենք ուզում էինք հնարավորինս արագ ձեզ հետ կիսվել այս տեղեկատվությամբ՝ ձեր սեփական պաշտպանության համար և նվազեցնել ցանկացած լուր կամ կեղծ տեղեկատվություն: Մենք երկու դեպքերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կուղարկենք հնարավորինս արագ, եթե լրացուցիչ տեղեկություն կամ հաստատված COVID-19-ի դեպք ստանանք:

Մեր սիրտը մեր աշխատակցի, իր ընտանիքի անդամների և ուսանողների հետ է: Մենք անում ենք հնարավոր ամեն ինչ, որպեսզի կարողանանք աջակցել մեր LACC-ի ընտանիքի անդամներին և ուսանողներին, և գիտեմ, որ դուք միանում եք ինձ՝ բոլորին մաղթելով լիարժեք ապաքինում:

Մենք դեռ աշխատում ենք քուեջը ամբողջովին ախտահանելու և մաքրելու ուղղությամբ՝ ձեր իսկ ապահովության համար: Քուեջի շուրջ 50% -ը արդեն ախտահանվել և մաքրվել է: Մենք ակնկալում ենք, որ ամբողջ քուեջը կավարտենք մինչև հաջորդ շաբաթվա վերջ:

Մենք խնդրում ենք, որ ոչ ոք չմտնի գրադարան այնքան ժամանակ, մինչև այն չվերաբացվի այն ախտահանելուց և մաքրվելուց հետո:

Խնդրում ենք վստահ լինել, որ մենք կանենք հնարավոր ամեն ինչ, որպեսզի օգնենք մեր ցանկացած ուսանողի և աշխատակցի, ովքեր հիվանդանան այս համաճարակային իրավիճակի ժամանակ:

Մենք բոլորին հորդորում ենք հետևել Կալիֆոռնիայի նահանգապետ Նյուսոմի «Մնացեք Տանը» և տեղական առողջապահության հեղինակությունների հրահանգներին: Նույնիսկ տանը միշտ հետևեք հիգիենայի կանոններին: Եթե հիվանդ եք, անհապաղ զանգահարեք ձեր բժշկին կամ բուժաշխատողին խորհրդատվություն ստանալու համար նախքան հիվանդանոց կամ շտապ օգնություն գնալը:

Առողջության մասին տեղեկատվության լավագույն աղբյուրը հասանելի է Լոս Անջելեսի շրջանի հանրային առողջության վարչությունից: Մենք նաև կշարունակենք թարմացնել մեր պաշտոնական coronavirus-ի կայքը՝ www.laccd.edu/coronavirus:

Կրկին, եթե հիվանդ եք, կամ եթե հավատում եք, որ դուք ենթարկվել եք COVID-19-ի հաստատված դեպքի, հնարավորինս շուտ դիմեք ձեր բժշկին:

Ես կշարունակեմ ձեզ տեղեկացված պահել ցանկացած այլ զարգացումների մասին:

Ջերմորեն,

Մերի Գալագեր

Լոս Անջելեսի Քաղաքային Քոլեջի Տնօրեն